ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և դատավարության

Հեղինակ՝ ի.գ.թ. Ա.Վ. Ալեքյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեակատարողական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտութուն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Քրեական արդարադատության արդյունավետ իրականացումը խախտված իրավունքների և օրինական շահերի պատշաճ ապահովման գրավականն է՝ քրեական և քրեակակատարողական օրենսդրությամբ նախատեսված պատժի կատարման միջոցով պատժի նպատակներին հասնելու համար: Հասարակական հարաբերությունների զարգացման սրընթաց տեմպերը պահանջում են պատշաճ քրեակատարողական կարգավորում և պատժի պատշաճ կատարում՝ ապահովելով ինչպես պատժի նպատակները, այնպես էլ՝ դատապարտյալների իրավունքները պատժի կատարման ընթացքում:

Ժամանակակից իրականության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի քրեակատարողական իրավունքի քաղաքականությունը, դրա զարգացման միտումները և ուղիները: Քրեակատարողական քաղաքականությունը գործունեություն է, որն ուղղված է քրեակատարողական օրենսդրության մեջ ամրագրելու պատիժների կատարման նպատակները, ձևերը, մեխանիզմները, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման գործիքակազմը:

Ապագա մասնագետների շրջանում քրեակատարողական իրավունքի ոլորտում խորը գիտելիքների ձևավորումը քրեական դատավարության, արդարադատության ոլորտում նրանց հաջող մասնագիտական գործունեության գրավականն է:

Քրեակատարողական իրավունքի ընդհանուր մասի դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսանողներին ծանոթացնել քրեակատարողական իրավունքի հիմնական կատեգորիաներին և ինստիտուտներին, դրանց իրականացման առանձնահատկություններին, մասնավորապես՝ ժամանակակից քրեակատարողական քաղաքականության միտումները հաշվի առնելով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դատապարտյալների իրավունքներին՝ այդ թվում միջազգային նորմատիվ իրավական ակտերի համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնել քրեակակատարողական օրենսդրության նորմերի կիրառման առավել խնդրահարույց հարցերի վերաբերյալ ՀՀ Բարձրագույն դատական

ատյանի դիրքորոշումներին, զարգացնել վերլուծական մտածողությունը և գործնական հմտությունները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

"Քրեակակատարողական իրավունք (ընդհանուր մաս)" առարկայի ուսումնասիրության նպատակն է ուսանողների մոտ ձևավորել քրեակակատարողական օրենսդրության ընդհանուր և հատուկ մասերի համակարգի վերաբերյալ համալիր պատկերացում, ձևավորել և զարգացնել վերլուծական մտածողության, այդ թվում՝ նախորդ և նոր քրեակատարողական օրենսդրության, միջազգային նորմերի իրավական համեմատության միջոցով, քրեակակատարողական օրենսդրության նորմերի մեկնաբանման հմտություններ և զարգացնել դրանց գործնական կիրառման հմտությունները:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

-հիմնական քրեակատարողական կատեգորիաների և ինստիտուտների վերաբերյալ գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորում;

-ՀՀ քրեակատարողական քաղաքականության հիմնական ուղղությունների և զարգացման միտումների վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում;

- իրավակիրառ պրակտիկայի վերլուծության, ընդհանրացման հմտությունների ձևավորում;

- իրավակիրառ պրակտիկայում քրեակատարողական օրենսդրության նորմերի կիրառման հիմնական խնդիրների և դրանց լուծման առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացումների ձևավորում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

-ՀՀ քրեակատարողական իրավունքի և օրենսդրության զարգացման հիմնական փուլերի վերաբերյալ հիմնարար գիտելիք;

-Իրավակիրառման (մասնավորապես՝ փաստերի վերլուծության, դատապարտյալների իրավունքների, պարտականությունների ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի,), քրեակատարողական հիմնարկների նգործունեության և նրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմների վերաբերյալ հիմնարար գիտելիք։

-Քրեակատարողական համակարգի կառուցվածքի և գործառույթների, քրեակատարողական օրենսդրությամբ ամրագրված պատժի նպատակների հասնելու կարգի և մեխանիզմների վերաբերյալ հիմնարար գիտելիք։

-Քրեակակատարողական իրավունքի որպես հանրային իրավունքի ճյուղ, սկզբունքների, ինստիտուտների, նորմերի էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք։

-Ժամանակակից քրեակատարողական իրավունքի զարգացման հիմնական միտումների և դրա կատարելագործման ուղղությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք;

-Պատժի կատարման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիք, այդ թվում՝ նոր քրեակատարողական օրենսդրությամբ ազատազրկման հետ կապված պատիժների կատարման կարգի, պայմանների և մեխանիզմների վերաբերյալ գիտելիք /այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկների տեսակների, լիազորությունների վերաբերյալ/

-Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների նկոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիք։

- ՀՀ քրեակատարողական օրենսգրքում առանձին հանցակազմերի կարգավորման առանձնահատկություններ վերաբերյալ գիտելիքներով։

- ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՌԴ Գերագույն դատարանի պլենումի իրավական դիրքորոշումների մասի գիտելիքներ:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

- Կառող է հիմնվելով ՀՀ քրեակատարողական օրենսդրության զարգացման միտումների և քրեակատարողական քաղաքականության ուղղվածության վերաբերյալ ձեռքբերված գիտելիքների հիման վրա ապահովել պատժի կատարումը:
- Կարող է ինքնուրույն կազմել և մշակել քրեակատարողական ոլորտում խախտումների վերաբերյալ որոշումների նախագծեր, տալ իրավաբանական եզրակացություններ քրեակատարողական, արդարադատության ոլորտում առկա խնդրների վերաբերյալ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հարցերի վերաբերյալ;
- Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել քրեակակատարողական հիմնարկում պատիժ կրող իր պաշտպանյալի /դատապարտյալ, բանտարկյալ/ իրավունքները և օրինական շահերը, ներառյալ իրավական դիրքորոշումների մշակումը, փաստաթղթերի պատրաստումը, փաստարկների ներկայացումը և դատական նիստերում իրավունքների պաշտպանությունը;
- Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ վերլուծել և պարզաբանել քրեակատարողական նորմերը;
- Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել քրեակատարողական ոլորտում թույլ տրված խախտումների /օրինակ, խոշտանգում/ գործերով դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին;
- Կարող է վերհանել իրավակիրառ պրակտիկայում առաջացած իրավական

խնդիրը՝ կապված դատապարտյալի իրավունքների հետ, պատժի կրման կարգի և պայմանների խախտման հետ, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի քրեական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ,եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ;

- Կարող է արագ կողմնորոշվել քրեակատարողական ոլորտում խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ;
- Կարող է կիրառել համեմատական իրավական հետազոտության մեթոդը Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական, ՀՀ նախորդ քրեակատարողական օրենսդրության ուսումնասիրության ընթացքում;
- Կարող է բացահայտել քրեակատարողական իրավունքի հիմնարար ինստիտուտների բովանդակությունը և դրանց տարբերակիչ առանձնահատկությունները ՀՀ և ՌԴ քրեակատարողական օրենսդրության համաձայն;
- Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ քրեակատարողական ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, խնդիրներ և լուծումներ:
- Կարող է իր գործունեության ընթացքում կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ մասնավորապես Arlis, Datalex, Irtek իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար:
- Կարող է հաղորդակցվել առնվազն մեկ մասնագիտական օտար լեզվով:
- Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:

- ***ընդհանրական իմացական հմտությունները*** ՝

- Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝

իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար:

- Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերելնախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում:

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը*** ՝

--Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն քրեական արդարադատության ոլորտում;

- Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ՝ ուղղված քրեակատարողական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:
    - - Ունակ է՝ աշխատելու թիմում:
    - - Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակությանկայացմանը, ազգային և համամարդկային արժեքներիտարածմանը:

-Ունակ է կառուցել մշակել պատժի կատարման մեխանիզմների, կարգն ու պայմանների և միջազգային քրեակատարողական ոլորտի զարգացման միտումները հաշվի առնելով՝ դատապարտյալների պաշտպանության ռազմավարություն և հիմնավորել իր դիրքորոշումը մասնագիտական էթիկայի կանոնների պահպանմամբ;

-Ունակ է ձևակերպել հիմնավոր եզրակացություններ և առաջարկություններ հիմնվելով ՀՀ հին և նոր քրեակատարողական իրավունքի նորմերի, միջազգային ստանդարտների վերլուծության վրա

- Ունակ է քրեական արդարադատության իրականացման գործընթացում քրեակատարողական իրավունքի նորմերի մեկնաբանման տարբեր եղանակների օգտագործմանը;
- Ունակ է կատարվածին գրագետ քրեաիրավական գնահատական տալու և քրեաիրավական նորմերի իրացմանը;
- Ունակ է իրականացնել իրավապահ և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության և ամփոփում;
- Ունակ է իրավակիրառ գործունեության մեջ մասնագիտական խնդիրներ լուծելիս հիմնավորել սեփական դիրքորոշումը:

Դասավանդման եղանակները և մեթոդները

"Քրեակատարողական իրավունք (ընդհանուր մաս)" առարկայի դասավանդման գործընթացում իրականացվում է դասավանդման դասական (ավանդական) և նորարարական (ինտերակտիվ) մեթոդների համադրություն: Բացի դասական դասախոսությունից և սեմինարից, նախատեսվում է նաև ուսանողների ակտիվ ներգրավումը քրեակատարողական իրավունքի առավել խնդրահարույց ասպեկտների քննարկմանը՝ բանավեճերի կազմակերպման միջոցով: Բանավեճի ընթացքում ուսանողները բաժանվում են երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրը հիմնավորում է իր դիրքորոշումը: Դասավանդման գործընթացում նախատեսվում է օգտագործել case-law մեթոդը, որի շրտանակներում ուսանողները քրեաիրավական վերլուծության են ենթարկում կոնկրետ իրավիճակ, զարգացնելով պրակտիկ հմտությունները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկ»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.1.Դասախոսություններ	**18**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.2. Ինքնուրույն աշխատանք	**38**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սկզբունքները	4	2	2
Թեմա 2. Դատապարտյալի իրավական վիճակը, բողոքարկման կարգը և մեխանիզմները: Դատապարտյալի վերասոցիալականացումը և նրա դրական	4	2	2

վարքագծի ձևավորումը			
Թեմա 3. Բանտարկյալների հետ վարման մինիմալ ստանդարտները, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիա	4	2	2
Թեմա 4. Պատիժ կատարող հիմնարկները և մարմինները, վերահսկողությունն ու հսկողությունը այդ հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ: Քրեակատարողական հիմնարկների կանոնակարգը և այն ապահովելու միջոցները: Ազատազրկման և ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցները	4	2	2
Թեմա 5. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները: «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը	4	2	2
Թեմա 6. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման կարգն ու պայմանները /կարճաժամկետ ազատազրկում, կարգապահական	4	2	2

գումարտակում պահելը/: Զինվորական ծառայության կանոնագիրքը: Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների կատարումը:			
Թեմա 7. Ազատազրկման և ցմահ ազատազրկման պատիժների կատարման հիմնախնդիրները: Պատժի կատարման պայմանները քրեակատարողական հիմնարկներում, դրա կատարման առանձնահատկությունները՝ ըստ անվտանգային գոտիների	6	4	2
Թեմա 8. Անչափահասների, մինչև 21 տարեկան անձանց պատժի կատարման առանձնահատկությունները: Պատժից ազատելը և սոցիալական աջակցությունը, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները:	4	2	2
Ընդամենը	34	18	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սկզբունքները

Քրեակատարողական իրավունքը՝ առանձնահատկությունները: Քրեակատարողական օրենսդրության սկզբունքների վերլուծություն՝ իրավապահ պրակտիկայի նյութերի հիման վրա: Համեմատական վերլուծություն ՀՀ հին և նոր, ՌԴ քրեակակատարողական օրենսգրքում տեղ գտած տարբերությունների վերաբերյալ, մասնավորապես առանձնահատուկ նշանակություն ունեն ՀՀ նոր քրեակատարողական օրենսդրությամբ ամրագրված խնդիրներն ու նպատակները /դատապարտյալի վերասոցիալականացում և վերաինտեգրում, վերջինիս մոտ իրավահպատակ վարքագծի դրսևորում/:

Թեմա 2. Դատապարտյալի իրավական վիճակը, բողոքարկման կարգը և մեխանիզմները: Դատապարտյալի վերասոցիալականացումը և նրա դրական վարքագծի ձևավորումը

Դատապարտյալի իրավական վիճակը ներառում է դատապարտյալի իրավունքները ու պարտականությունները /առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իրավակիրառ պրակտիկայում պատժի կատարման պայմաններից բխող դատապարտյալի իրավունքների սահմանափակման կամ խախտումների հիմնախնդիրներին/, ուսումնասիրվում է «վերասոցիալականացման» և վերաինտեգրման հիմնախնդիրները, ուսումնասիրության ընթացքում նաև մշակվում են դատապարտյալի դրական վարքագծի ձևավորմանը նպաստող օրենսդրական և պրակտիկ մեխանիզմներ

Թեմա 3. Բանտարկյալների հետ վարման մինիմալ ստանդարտները, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիա

Իրավահամեմատական վերլուծության են ենթարկվում ՀՀ քրեակատարողական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայում գործող մեխանիզմների և բանտարկյալների հետ վարման մինիմալ միջազգային ստանդարտների համատեքստում: Ուսումնասիրվում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիան և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ:

Թեմա 4. Պատիժ կատարող հիմնարկները և մարմինները, վերահսկողությունն ու հսկողությունը այդ հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ: Քրեակատարողական հիմնարկների կանոնակարգը և այն ապահովելու միջոցները: Ազատազրկման և ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցները

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով հստակ տարանջատվում են համապատասխան տեսակի պատիժը կատարող մարմինները: Միաժամանակ, օրենսգրքով ամրագրվում է նշված մարմինների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների շրջանակը: Առանձնահատուկ վերլուծության է ենթարկվում դատախազական հսկողություն սահմանող նորմերը, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական հիմնարկների մուտքի և ելքի տվող նորմը, որն ունի և իրավակիրառ պրակտիկայում առաջ է բերում բազում խնդիրներ:

Թեմա 5. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները: «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը

Ազատությունից զրկելու հետ չկապված պատժի տեսակների կատարման կարգն ու պայմաններն են ուսումնասիրվում, որի շրջանակներում ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքով առնձնացվում են նոր կարգավորումներ՝ ուղղված օտարերկրյա պետության քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող դատապարտյալին ՀՀ տարածքից վտարելու կարգն ու պայմանները: Դրանց իրականացումն ապահովում է Պրոբացիայի ծառայությունը, որի լիազորությունները սահմանված են օրենքով:

Թեմա 6. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման կարգն ու պայմանները /կարճաժամկետ ազատազրկում, կարգապահական գումարտակում պահելը/: Զինվորական ծառայության կանոնագիրքը: Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների կատարումը:

ՀՀ նոր քրեական և քրեակատարողական օրենսգրքով սահմանված պատժի տեսակներ են՝ կարճաժամկետ ազատազրկումը, իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող

քրեաիրավական ներգործության միջոցների կատարման կարգն ու պայմանները: Կարգապահական գումարտակում պահելու պատժի կատարման կարգն ու պայմանների լավ պատկերացման համար անհրժեշտ է Զինվորական կանոնագրքի ուսումնասիրություն և տիրապետում:

Թեմա 7. Ազատազրկման և ցմահ ազատազրկման պատիժների կատարման հիմնախնդիրները: Պատժի կատարման պայմանները քրեակատարողական հիմնարկներում, դրա կատարման առանձնահատկությունները՝ ըստ անվտանգային գոտիների

Պատժի ամենախիստ տեսակը ազատազրկումն ու ցմահ ազատազրկումն է: Ազատազրկման կատարումը նոր քրեակատարողական օրենսգրքում ունի իր առանձնահատկությունները. մասնավորապես, ժամանակակից քրեակատարողական քաղաքանության մեջ ազատազրկումը դիտարկվում է անձի՝ ֆիզիկական, ազատ տեղաշարժման իրավունքի զրկում, որը չի ներառում այլ իրավունքներից զրկում կամ սահմանափակում /բացառությամբ եթե դա բխում է տվյալ անվտանգային գոտում պատժի կատարման պայմաններից:/:

Բացի այդ, ժամանակակից քրեակատարողական քաղաքականությունը, ի տարբերություն նախորդ քրեակատարողական օրենսգրքում տեղ գտած ամրագրումների հրաժարվել է պատժի կատարման պայմանները որպես ռեժիմ դիտարկելուց, ինչով պայմանավորված՝ նոր քրեակատարողական օրենսգրքում ազատազրկման ձևով պատժի կատարումը ապահովում են քրեակատարողական հիմնարկները՝ ըստ անվտանգային գոտիների: Ուսումնասիրվում են անվտանգային գոտիները, դրանցում պատիժ կրելու կարգն ու պայմանները:

Թեմա 8. Անչափահասների, մինչև 21 տարեկան անձանց պատժի կատարման առանձնահատկությունները:

Պատժից ազատելը և սոցիալական աջակցությունը, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները:

ՀՀ նոր քրեակատարողական օրենսգիրքը տարանջատում է ոչ միայն անչափահասների, այլև մինչև 21 տարեկան անձանց պատիժների կատարման առանձնահատկություններ, սահմանում է պատժից ազատելու կարգն ու պայմանները, ազատման դեպքում՝ նախատեսում է սոցիալական աջակցության կարգավորումներ, ինչպես նաև սահմանվում են քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները։

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք /15.06.2022թ./

2. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք /24.12.2004/

3. ՀՀ Քրեական օրենսգիրք

4. Բանտարկյալների հետ վարման մինիմալ միջազգային ստանդարտներ

5. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիա

6. ՌԴ քրեակատարողական օրենսգիրք

7. «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը /17.06.2016թ.-ի/

8. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» /21.03.2012թ./

9. ՀՀ վճռաբեկ դատարանի վճիռներ

10. Խաչիկյան Հ.Մ., ՀՀ քրեակատարողական իրավունք (բուհական դասագիրք), ԵՊՀ հրատ., Երևան 2023թ.:

11. Խաչիկյան Հ.Մ., Ազատազրկման իրավական կարգավորման տեսական, մեթոդոլոգիական և կազմակերպական ասպեկտները ՀՀ-ում, Երևան, 2021թ.:

12. Уголовно-исполнительное право Российской Федерации. М., 2021 под редакцией Бриллиантова А. В., Курганова С.И.

13. Խաչիկյան Հ.Մ., ՀՀ քրեակատարողական իրավունք, Երևան 2011թ.:

14. Уголовно-исполнительное право/ Под ред. И.В. Шмарова. М., 1998.

15. Уголовно-исполнительное право. Гришко А.Я., Иванов В.Д М., 2017.

16. Уголовно-исполнительное право России/ Под ред. В.И. Селиверстова. М., 2019.

17. Уголовно-исполнительное право России/ Под ред. А.И. Зубкова. М., 2002.

18. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М., 2014.